



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴԻՐ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք կը տեսնանք սեփական
ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՏԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբարձր փողոցների ան-
կիւնում, Թաւմաշեկի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել Տեղական հա-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԳԻՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քանի նկատողու-
թիւններ մեր ցորենի առեւտրի առիթով. Հայոց
թատրոն. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի ֆինանսների
հայազգի միութեամբ. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ.— ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.— ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԽԱՆՆԵՐ. Ծաղ-
րեր.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ՅՈՐԵՆԻ
ԱՌՈՒՑՈՒԹԻՒՆ ԱՌՈՒՑՈՒՄ

Այն թերթը միայն կարող է իսկապէս արժա-
նաւորութիւն ունենալ, որը միշտ յարուցանում է
աշխարհի հարցեր, որոնք մտածելու նիւթ են տա-
լիս իր ընթերցողներին, իսկ նրա յարուցած հար-
ցերը լազարապետների կերպով քննարկում են և
պարզապէս Պէտք է խոստովանած, որ «Մշակը»
ունենել է միշտ և ունի այդ արժանաւորութիւնը.
Նա միշտ, այս կամ այն կերպով, եղել է հասա-
րակական նշանաւոր և հետաքրքիր հարցերի յա-
րուցման սկզբնապատճառը: Այդ նշանաւոր հար-
ցերից մէկն է «Մշակի» մէջ յարուցված է պ.
Արախանեանցի յօդուածներով՝ «Ցորենի առեւտրի
մասին Անդրկովկասում» Բայց ամեն մի հարց,
որը յարուցվում է մէկի կողմից, եթէ բազմա-

կողմանի չը քննվի, նա կը մնայ խուլ և մութ հա-
սարակութեան համար: Պ. Արախանեանցի յօ-
դուածները շատ հետաքրքիր յօդուածներ են: Ինչ-
պէս երևում է նա ոչինչ չէ խնայել այդ հարցը ու-
սումասիրելու համար: Բայց մի և նոյն ժամանակ
ուսումնասիրել է նրան աչքի առաջ չունենալով մի
քանի նշանաւոր կետեր, կամ գուցէ ունենել է՝
նրանց նշանակութիւնը չէ տեսել: Բայց և ակամայ
ընթերցողի աչքին են ընկնում այդ զանցառու-
թիւնները: Մեր նպատակն է այդ կետերը մի առ-
մի յիշել: Նախ յօդուածագիրը շատ համակրանքով
է վերաբերվում Անդրկովկասի ցորենի արտադ-
րութեանը և ցանկութիւն է յայտնում դրա չափի
ընդլայնումը, որի հետեանք կը լինի անշուշտ
ցորենի ցանքերի արտադրութեան ընդարձակումը:
Բայց այդ վերջին հանգամանքը չէ կարող արդեօք
վատ հետեանք ունենալ դիւրամտութեան միւս
արդիւնաբերութիւնների համար, որոնք կրկնա-
պատիկ օգուտ կարող էին տալ դիւրացումը. օրի-
նակի համար՝ բամբակի, թափաքի, գինաղբի-
չաքի սերմի և ուրիշ տեխնիկական բոյսերի արդիւ-
նաբերութիւնը: Այդ բոլոր բոյսերը յայտնի են
դիւրամտութեան մէջ իրանց շահաւէտու-
թեամբ: Միտումանք այդ բոյսերը ամենալից յաջ-
ողութեամբ կարող են արդիւնաբերվել Անդրկով-
կասում: Ուրեմն առկա է լաւ չէր լինի միջոց տալ
դիւրացումը, որ նա աւելացնի դրանց արդիւնա-
բերութիւնը, որի վրա նա քիչ ուշադրութիւն է
դարձրել մինչև այժմ: Երկրորդ հարցը մեր երկա-
թուղու. դժի անյարմար ուղղութիւնն է և առհա-

տարակ մեր գիւղերի և քաղաքների իրար հետ ու-
նեցած վատ հաղորդակցութեան պատճառով մի-
մեանցից անջատված լինելը: Արդեօք այդ հանգա-
մանքը աչքի առաջ ունենալով, մեծ քանակու-
թեամբ արտահանութիւնը, որը սպառում է գիւ-
ղացիների պաշարը, չէր կարող վտանգ սպառնալ
մեր երկրին հացի պակասութեան ժամանակ:
Ինչպէս և օրտեղից կարող ենք հաց հասցնել
գիւղացու: Մեր կարծիքով, այդ հանգամանքը ու-
շադրութեան արժանի է, որովհետեւ մենք կար-
ծում ենք, որ յօդուածագիրը իր հաշիւներում մա-
սամբ սխալվում է: Մեր երկիրը այնքան հաց չէ
արտադրում, որ կարողանայինք մեր պիտոյները
լրացնելուց յետոյ մեծ քանակութեամբ արտահա-
նել: Վերջին երկու տարվայ արտահանութեան
աշուղթեան վրա մենք դու հիմնով չենք կա-
րող:

Մեր կարծիքով, այդ երկու թերթերը է բացատ-
րել նշանով, որ այդ տարիները արտահանվում
էր մի քանի առատ տարվայ ընթացքում ժողոված
աւելորդ հացը, որը մինչև այժմ դիւրացին տոլո-
րութիւն ունէր յետ ցեղեւ. նեղ օրվայ համար:
Կեռ ինչ կը լինի հետեւալ տարիները՝ կտեւանայ
արդեօք արտահանութիւնը, այդ դու հարց է:
Բայց մենք կարծում ենք, որ կը պակասի: Մենք
ցատում ենք, որ չունենք ճիշտ տեսարկութեան
տեղեկութիւններ Անդրկովկասի ցորենի արտա-
հանութեան քանակութեան մասին: Եթէ դժբա լի-
նէին, շատ հեշտ կարելի էր իմանալ Անդրկով-
կասի մէջ արտադրվող և գործածվող ցորենի
քանակութիւնը, համեմատել և որոշել արդեօք
ինչքան աւելորդ հաց կը մնար արտահանութեան
համար: Բայց և այժմ մօտաւորապէս կարելի է
ուսնել այդ հարցը: Պ. Արախանեանցի հաշուով
100,000 ընակիչներ համար հարկաւոր է տարե-
կան 500,000 պուլց ցորեն, ուրեմն ամեն մի մար-
դու համար տարեկան 5 պուլց: Այդ հաշուով ամ-
բողջ Անդրկովկասի 4,187,191 ընակիչների գոր-
ծածութեան համար հարկաւոր է 20,935,955
պուլց ցորեն: Եթէ որան աւելացնելու լինէր գոր-
քի համար գնելի 1,160,000 պուլց և մի տարվայ
ընթացքում արտահանած ցորենը, որը մօտաւորա-
պէս պ. Արախանեանցի հաշուով հասնար է
3,000,000 պուլցի, կը տեսնանք ընդամենը
25,935,955 պուլց: Ուրեմն, պ. Արախանեանցի
տեսակէտով կարելի է ենթադրել, որ ամբողջ
Անդրկովկասում այդքան ցորեն է արտադրվում:
Բայց մեր հաշուով այդ թիւը, այսինքն 5 պուլց
տարեկան ամեն մի մարդու համար շատ քիչ է:

Եթէ չեմ սխալվում Ռուսաստանի տնտեսաւոր-
ները ընդունում են, որ տարեկան աւելի քան 10
պուլց է հարկաւոր ամեն մի մարդու համար, իսկ
մենք վերջինք միջին թիւով 10 պուլց ամեն մի
հոգու համար: Եւ այն ժամանակ աւելորդ Անդր-
կովկասի 4,187,191 ընակիչների գործածութեան
համար հարկաւոր կը լինէր տարեկան 41,871,910
պուլց ցորեն. աւելացնելու որան պուլցի համար դը-
նելի թիւը 1,160,000 պ., ընդամենը Անդրկովկա-
սի գործածութեան համար, մեր հաշուով, հարկաւոր
է 43,031,910 պուլց: Հիմա, եթէ ունենայինք Ան-
դրկովկասի ցորենի արտադրութեան մասին հա-
տատ տեղեկութիւն, կարելի էր համեմատել և ի-
մանալ թէ՛ ինչքան աւելորդ ցորեն է մնում ինչ
հիման վրա պ. Արախանեանցի ընդունում է
500,000 պուլց 100,000 մարդու համար,—չը դի-
տենք: Բայց եթէ ընդունելու լինէինք նրա վերջ-
նական թիւը, իբրեւ ճիշտ թիւը, մեր տեսակէտից
պէտք է դեֆիցիտ եւ զոյանալ:

Դաւանալով հարցի այն կէտին թէ արդեօք այդ
երկու տարվայ ցորենի արտահանութիւնից դիւրա-
ցին շահվել է թէ ոչ, մենք կը պատասխանենք
ոչ այնքան դրականապէս, ինչպէս այդ անում է
պ. Արախանեանցի: Պարզեք մեր միտքը. պ.
Արախանեանցի ընդունած թիւը, իբր թէ դիւ-
րացին առաջ ծախում էր ցորենի պուլցը 40 կո-
պէկով, իսկ այժմ 65 կ. ճիշտ չէ: Բայց նրանում
է, որ ցորենի վաճառականների գործակաւարնե-
րը (աղետները) համարեալ թէ երբեք իրանք ուղ-
ղակի դիւրացուց չեն առնում ցորենը, այլ տա-
նում են այդ բերքը դիւրական չարխների երրորդ
և երբեմն չորրորդ ձեւերից: Այնպէս որ շատ կա-
րելի է, որ վերջին չարխին, որը անմիջապէս գոր-
ծակաւարներին ցորեն է ծախում, իսկ նրան տաւում
է նրանից 65, մինչև 70 կոպ., իսկ ինչ վերաբը-
րում է դիւրացուն, նա շարունակում է ստանալ
իր առաջվայ գինը՝ 40 կոպ: Եւ եթէ մինչև ան-
գամ մի փոքր աւելով էլ ծախվիս լինէր, դար-
ձեալ օգուտ չէր ունենալ, ահա թէ ինչու: Առհա-
տարակ դիւրացում ցորենի առեւտուրը կատար-
վում է հետեւալ կերպով. բոլոր վաճառականնե-
րը, որոնք մատուցութիւն ունեն ցորեն քնելու,
նրանք երբեք չեն յայտնում իրանց մատուցութիւ-
նը մինչև դիւրացու հարկերը վճարելու ժամանա-
կը (որը լինում է կաւեր թակելուց յետոյ), իսկ
այդ միջոցին դիւրացին նեղ դրութեան մէջ, փո-
ղի կարտուութեան պատճառով, պատրաստ է ծա-
խել իր ապրանքը ինչ քնով և լինի, միայն թէ
փող տան նրան հարկերը վճարելու համար: Եւ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ծ Ա Յ Ր Ե Ր

Բ.

ԹԻ. ԻՆՉՊԷՍ ԽԵԼԻԲԻ ԲԵՐԻՆ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԹԻՒՆ

I

Ցան և չորս տարի էր անցել Սօֆիի ծնվելուց
և չորս տարի այն ժամանակից, երբ նա «աղջիկ»
էր դառել, ուրիշ խօսքերով, երբ սկսել էր տղա-
մարդի մօտ երեսը ծածկել, մօր մօտ օրերով նըս-
տել և տունը կատակաբեր:

Այդ ձևափոխութիւնը միանգամից չէր կատար-
վել:

Սօֆին փողոցի խաղերին սիրահար, մի անհոգ
երեխայ էր: Եթէ ամբողջ օրերով տուն չէր գը-
նում, հայրն ու մայրը նրան չէին որոնի, ան-
պատճառ իմանալով որ նա հարևանների անե-
րում խաղով զբաղված կը լինի: Փոքրիկ աղջկան
ոչ չէր կարողանայ հաւատարման թէ աշխար-
հում մի ուրիշ տեսակ կեանք էլ կայ. նա սովորել
էր հասկանալ թէ օրը այն է, երբ նա անկողնից
վեր է կենում, շորերը հագնում է, երեսը մի կերպ

լուսնում, մի կտոր հաց ձեռքն առնում, գնում է
կամ իրանց մեծ բակի մի անկիւնում հողի տնակ-
ներ չինում, կամ հարևան երեխաների հետ փողո-
ցի մէջ զանազան խաղեր սարքում: Նա սովորել
էր ճաշին գնալ տուն, թէ մայրը կը կանչէր, կը
տանէր. եթէ ոչ, կը մնար իր ընկերների տանը,
ուր նրան էլ մի կտոր հաց կը հասնէր. և այդ
կտոր հացը այնպէս կը տեսէր, որպէս իրանց տանը,
մինչև իսկ կը պահանջէր շատ տալ, ընկերների
բաժնին հաւասար: Միայն միշտ ժամանա-
կը կը յիշէր, որ իրանք էլ տուն ունեն: Կը վաղէր
կը գար մօր մօտ. հայրը տուն կը գար և նա
նրանց կը պատմէր անցկացրած օրվայ բոլոր յի-
շուղթիւնները: Չէր կարելի ասել թէ այդ շատա-
խօսութիւնը ձանձրացնում էր ծնողներին. ընդհա-
կառակ Սարգիսն ու Աննանը (Սօֆիի հայրն ու
մայրը) միշտ քաղցրութեամբ էին պատասխանում
նրան, մանրամասն պատմում էին այն հանգա-
մանքների մասին, որ հետաքրքրում էին փոքրիկ
շատախօսին:

Այդ ազատ կեանքը, այդ սովորութիւնը հեռ-
դհեռ տուին Սօֆիին մի, ինչպէս ասում են, «այ-
րող լեղու»: Ամեն բան գիտէր, ամեն ինչ շատ
լաւ յիշում էր. և այնքան ընդունակ էր դիտելու և
յիշելու մէջ, որ ծանօթներն ասում էին, թէ նա
կամ ծաղկի լաճին կը դառնայ, կամ չիւր դուլը
կուտէ: Ժողովուրդը այսպիսի անընտան կատա-
րելագործութիւնը համարում է մի տեսակ քրաշք,

որ, ինչպէս և ամեն հրաշք, երկարատեւ չէ լի-
նում, վաղաժամանակ աջնաւորում է, անյայտա-
նում է Մի և նոյն ժամանակ թաղի պատանները
հաստատ համոզված էին, որ այդպիսի լաւ երե-
խան, ինչպէս փորձված է, անբաղդ է լինում:
Բայց այդ բոլոր գուշակութիւնները չէին հետա-
քրքրում Սօֆիին: Եւ նա չէր էլ կարող հասկա-
նալ թէ ինչ են նշանակում դրանք. ապագան ան-
կում «յետոյ», «էգուց», «միւս օրը»—այդ նրա
խելքի բանը չէր: Նրանք ներկային էր, այսօրը, ե-
րէկը, մի խօսքով տեսածը:

Այդպէս էր ահա Սօֆիի մանկութիւնը, մինչև
այն ժամանակ, երբ սկսեց նրա կեանքի ուրիշ
չըջանը:

Առանց մեր ասելու էլ ընթերցողը կարող է
երեւակայել թէ որքան մեծ պիտի լինէր Սօֆիի
վրդովմունքը, երբ նրա մայրը սկսեց նրան «տա-
նով անել», որը նշանակում է ընտանեցեան: Այլ
և մայրը առաջնապէս թողել չէր, որ չէր նայում,
թէ ինչ է անում իր աղջիկը: Աննանը այժմ
խիստ էր հսկում նրան, չէր թողնում հեռու գը-
նալ, տանից երկու բացակայ լինել: Մի քանի
ժամանակ անցած, Սօֆին արդէն ցուրտ անելը
սովորել էր. տունը աւելում էր, վաղ առաւօ-
տեան կիով ջուր էր բերում հորերից, կրակ էր ա-
նում, դարաբաղցու հատարակ ու պարզ կերա-
կոյն էր եկում: Նա ուրեմն տան կատակաւորչ

էր դառել:
Ցան և երեք տարեկան հասակում Սօֆին ար-
դէն մոռացել էր փողոցը: Նա երբեմն յիշում էր,
որ մի ժամանակ ինքը օրվայ շատ մասը այնտեղ
էր անցկացնում. մտածում էր թէ ինչ պատճառով
այն ժամանակ կարելի էր, իսկ այժմ անկարելի:
Մինչև իսկ այժմ յօժար չէին, որ նա մի քիչ խօ-
սի այն տղերանց հետ, որ իր անբաժան ընկեր-
ներն էին: Բայց ոչինչ պատճառ չէր գտնում:
Վերջին այն ժամանակ այնպէս պէտք էր, այժմ
այսպէս՝ ասում էր նա դրանով բոլորովին
հանգստանում: Այդ փոփոխութիւնը այժմ բոլոր-
վին բնական էր երևում նրան, մի հասարակ ըն-
թացք, որ ամեն մէկի համար մի և նոյնն է:

Բայց նախկին կեանքի փոփոխութիւնը շատ
բան չէր իւրել Սօֆիից: Իրաւ է, արեւի և ցրտի
ազդեցութեան տակ կուտացած դէմքը հետզհետեւ
քնքշանում էր տան միջնորդի մէջ, թշուր կար-
միւրութիւնը աւելի թարմացել էր և պայծառ էր,
բայց նրա ներքին անփոփոխ մնաց այն աստի-
ճան, որքան նոր կեանքը չէր կարողանում ա-
ռաջվանը փչացնել: Նա դարձեալ շատախօս էր,
բայց ոչ նոյն շատախօսը, ինչպէս էր առաջ: Այժմ
էլ սիրում էր երկուրդ ու բարակ մասախօսութեան
անել հասակակից աղջիկների հետ իրանց տալի-
տակապատ բակի մի ծայրում, կամ երբեմն գնում
էր նրանց տունը: Վերջին օրերը աղիկներ էր
խաղացնում ընկերուհիների հետ մի որ և է

ահա հենց այդ միջոցին նրան օգնութեան է համարում վաշտապետը, չարքին, և կատարում է նրա խնդիրը, գնելով ցորենը իր ուղած գնեքով: Ի հարկէ, մեր խօսքը այստեղ մեծամասնութիւն կազմող չքատուր գիւղացու մասին է, որը ոչ կարող է սպասել մինչև ցորենի գինը հաստատովի, ոչ էլ կարողութիւն ունի, որ տանի իր սպրանքը քաղաքի շուկան, որտեղ աւելի բարձր գին են տալիս: Եւ ինքն աւանատես եմ եղել այս երկու տարբեր ընթացքում շատ այդպիսի տեսարաններ: Ի Ռբեմն գիւղացին ծախսեց չնչին գնով աւելորդ ցորենը հարկերը վճարելու համար, թողնելով մի քանի թաղար էլ, իբրև տարվայ պաշար: Տեսնէ՞ք թէ ինչպէս է գործածում գիւղացին այդ պաշարը: Երբ որ արդէն հարկատուութեան ժամանակն անցել է, ուրեմն գիւղացին փողի առանձին կարօտութիւն չունի, չարչի-վաշտապետ աւելացնում է գինը: Գիւղացին հրապուրելով դուրսնուլ, ծախում է իր պաշարի մի մասն էլ, յուսալով որ ապագայում յիշեալ գինը կը պակասի, ապա և արժան կը դարձնէ իր ծախածը: Բայց աւելի, ցորենի գինը շուկայում պակասելու տեղ աւելանում է և գիւղացին խաբւած լինելով մտաւ յոյսերից, լրացնում է իր կարիքը կրկնապատիկ վճարելով: Ասածներէս ընթերցողը պարզ կարող է ըմբռնել, թէ ինչքան օգուտ է ստանում գիւղացին այսօրվան հանգամանքներում մեր երկրի ցորենի արտահանութիւնից:

Աճքի առաջ ունենալով այդ հարցի մեծ նշանակութիւնը, ցանկալի կը լինէր, որ «Մշակի» գաւառական թղթակիցները բազմակողմանի տեղեկութիւններ տալին վերոյիշեալ հարցի մասին: Օրինակ, շատ մեծ նշանակութիւն կունենային հարցի պարզելում ցորենի արտադրութեան քանակութեան մասին տեղեկութիւնները, որոնցից միայն, մեր կարծիքով, կրնալիւմ է այդ հարցի ճիշդ լուծուիլ:

Գ. Ն.

ՀԱՅՈՑ ԹԱՏԻՐՆ

Երկուշաբթի, յունվարի 12-ին, հայոց խումբը ի նպատակ այդ կերպիւնի ներկայացրեց ֆրանսերենից թարգմանած ինչոր մի անցյալ հեղինակի «Փարիզի աղքատներ» անունով մեթոդական: Արա նման արկեսների մասին «Մշակում» արդէն շատ է խօսացվել, այդ պատճառով կրնան նորից հինգ աւելորդ էլ երկրորդ գործողութիւնից սկսած զխառն հերոսները ամբողջ ժամանակ լալիս են, և այդ շարունակութեամ է մինչև վերջին հոֆերորդ գործողութիւնը: Տէր Աստուած, ինչ դարձնանքներ ասես որ չը կան այստեղ: Խեղճ ուղիղները, հեղինակը ամբողջ հինգ ժամ բոլոր դանակով կտրատում է նրանց ջղերը: Եւ որ մեղքերի համար, այդ միայն իրան հեղինակի զաղտնիքն է Ուլմիդիւնից աւելի բարեկաւ դրութեան մէջ չէին և դերասանները, որոնք ստիպւած էին այս գաղլիխատիւնս ներկայացնել հայ հասարակութեան առջև: Աւալին երկու գործողութիւնը մեղ

ծածուկ տեղ, կամ թէ բակի դռների քանակին թաքնուած մտիկ էր տալիս փողոցով անցնողներին: Գարնան կիրակի օրերը թաղի կանանց և աղջկերանց հետ գնում էր զգոսանքի, ի հարկէ միշտ անցնելի տեղեր, ուր ամենից քիչ կարելի էր աղամարդ տեսնել: Տարին մի անգամ էլ կար մի ուրիշ ուրախութիւն. դա Ջալոլի օրն էր, երբ նա էլ գնում էր եկեղեցի, տեսնում էր մեծ փողոցների կենդանութիւնը, խանութներ, վաճառողներ, գնորդներ, տեսնում էր մեծագոյն փողոցի աղբուկը: Եւ միջոցաւ և տախտակներ ձեռքով մտիկ արաւ փողոցին:

Այս անգը թեցինք բոլոր այն մշտական օրերը, երբ չուէնցի աղջիկը կարող է կեսնը տեսնել: Մնացած ժամանակը աղջիկ դառած Սօֆիի աշխարհը իրանց տունն էր ու բակը:

Մի օր Աննամար լաբիկամի տուն էր գնացել. մնացել էր մէնակ Սօֆին, որ բակի տախտակներին տակ մի կտոր չորի վրա նստած գուլպա էր անուրձնում: Թանկարը նրա ուշադրութիւնը գրաւեց փողոցի աղբուկը: Եւ միջոցաւ և տախտակներ ձեռքով մտիկ արաւ փողոցին:

Այդտեղ մարդկանց մի մեծ խումբ գտնում, աղաղակում էր, միմեանց քաջքում էին, միմեանց օձիքից բռնում: Կուս պատճառը, ինչպէս երեւում էր, մի մարդ էր, որ խմբի մէջ պաշարված էր և լաւ չէր երևում. մի քանիները նրա կողմէն էին, մնացեալները հակառակ կողմէն:

Սօֆին կարծեց թէ դա մի խաղ է, կամ մի հանաք, որ կուս անուրով յաճախ տեղի էր ու

շարժուելու տեսնել: Սաղաքին ինչպէս կարող էին այս յիմարագոյն դրամա ասացված: Բէնեֆի-ցիանտ պ. Կիւրեղեան ամեն ջանք գործ էր դրում, որ վերջապէս իրան ցոյց տայ Թիֆլիսի հասարակութեանը, և երկի այդ պատճառով մի քանի տեսարաններում շատ չափազանցում էր: Միայն դերասանները ընդհանրապէս լաւ էին:

«Փարիզի Աղքատներ» յետոյ խաղացվեցաւ պ. Կիւրեղեանի գրած մի վերջովի «Նրկու պոլեցիք» Ռուսաստանում անուանով: Վերջովի բովանդակութիւնը մի շատ անշնչան բան է: Երկու պոլեցիք եկել են Ռուսաստան ու վեր են եկել հիւրանոցում. դժբաղդաբար նրանք ուսուցին չը գիտէին: Եւ ահա ներկայացվում է հիւրանոցում նրանց զլխին եկածը: Վերջովի գրված է առանց որ և է պիտեան գիտել և մեծ «հումորով»: Հասարակութիւնը սկզբից մինչև վերջը ծիծաղում էր խեղճ պոլեցիքների հետ պատահած qui pro quo-ների պատճառով, և վերջում բուռն ծափահարութիւններով վարձատրեց հեղինակին, որ մի և նոյն ժամանակ կատարում էր պոլեցիքների մէկի դերը: Հասարակութեան կողմից պ. Կիւրեղեանին տրվեցաւ մի պսակ և մի երկու ուրիշ նուէր:

Ներկայացումը վերջացաւ 1½ ժամին. ցանկալի է որ միւս ներկայացումները հետ այդ չը պատահէ:

Nemo

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յունվարի 9-ին

Հաղիւ երկու շաբաթ կալ, որ հրեհին ոչնչացրել է քաղաքի երկես. ուսումնարանի շինութիւնը և ահա այսօր վիճակիցնա բաթումցիներին նորից աւանատես լինելու մի նշոյնիս: Կատարի հրեհին Այս անգամ հրեհին գոհ գնաց տեղիս հեռագրա-կայարանը և փոստատունը: Հրեհը սկսվել է այս երեկոյ ժամի 9-ին յիշեալ շինութեան վերնայարկից, ուր բնակվում էր հեռագրատան կառավարիչը, և այժմ ամբողջ շինութիւնը կիսակործան է, կատարի բոցերն մէջ. աղաղակելու յոյս և հնարք չը կայ ամենեկին: Եւ ինչու կարելի է այդպիսի հրեհների դէմ մարտնչել, քանի որ Բաթումը դուրի է հրաշք միջոցներից. չունի հրաշքների խումբ և նոյն իսկ դուրս համար կարելու գործիքներ: Սակայն եթէ մի փոքր աւելի հոգատարութիւն ունեցած լինէին քաղաքի վրա այն պատուելի պարոնները, որոնց ձեռքին է քաղաքի կառավարութեան ղեկը, Բաթումը անշուշտ կունենար օրինաւոր կազմակերպված հրաշքների խումբ, որը այդպիսի դժբաղդ միջոցներում կարող էր օգնութիւն և փրկութիւն հասցնել: Բայց Բաթումի ոչ պակաս նշանաւոր եւ կամուրը յայտնի չէ թէ ինչ կդանակներով է ծախսվում և քաղաքը այսօր դուրի է մի այդպիսի փրկարար միջոցից:

Իբրև մի գեղեցիկ օրինակ այդ յիշեալ պարոնների քաղաքիս շահերի մասին ունեցած հոգատարութեան առաջ կը բերում հետեւեալ իրողութիւն-

ներում երկու հարեան թաղերի անդործ ջահիլներն մէջ: Որովհետեւ հեռագրերը տեսարանը լաւ տեսնելու համար քաւական չէր տախտակների նեղ ձեղքը, ուստի Սօֆին բակի դռան օգնութեան դիմեց: Բայց որպէս զի ոչ ոք իրան չը տեսնի, նա կանգնեց դռների մէջ և սկսեց նախել:

Վայրենի կռիւլ սաստկացել էր: Հարուածները կարկտի առատութեամբ թափվում էին սրա ու նրա ուսերին, մէջքին, գլխին: Բայց ամենից շատ, ինչպէս նկատեց Սօֆին, ծեծվում էր կուսի պատճառը, այն կարճիկ մարդը, որ չը գիտէր ուր ծածկվել: Գրան ճանաչում էր ոչ միայն օրիորդը, այլ և այդ թաղի ամեն մի փոքրիկ երեխայ: Այդ մարդը թէն այն թաղից չէր, ուր այժմ կուսում էր, բայց մի ընդհանուր հռչակ էր ստացել իր քաջարարութեամբ, որ հաւասարապէս ցոյց էր տալիս թէ գոտեմարտը, թէ մեծ փախուկ փախուկութիւն մէջ, որ նա շատ յաճախ աւանում էր ամեն տեղ: Բայց այդ ամենից նա յայտնի էր իբրև լաւ քեֆ անող և համարելի: Երբ փողոցում յայտնվում էր թուրքի կողմակի սե փախուկ գլխին և թուրքի փոքրիկ կոփիներ հաղած կարճահասակ մարդը, պատանիները միմեանց ցոյց էին տալիս նրան, ասելով. «Քեքըումնից Աստուածատուր է, տեսնո՞ւ ես»: Աստուածատուրը չուէնցի «Վահիլներ» մի տեսակ իդէալն էր, շատերն էին աշխատում նմանվել նրան. Հա-

նը: Ինչպէս «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, այդ պարոնները, առանց օրինաւոր կերպով յայտարարելու, աճուրդ կայացնելով տեղիս ուսուցիչներին մէջ՝ քաղաքիս կուսահարկը ներկայ տարվայ համար աճուրդով տուած էին իրանց յայտնի մի պարոնի՝ տարեկան 2,300 ռուբլիով: Երբ տեղիս վաճառականները իմացան այս հանգամանքը, իսկոյն հեռագրով եղելութիւնը յայտնեցին Գուրմայիսի նախագահներին, ինչոքեւ լով երկրորդ անգամ աճուրդ նշանակել տալ: Եւ ինչ երեսց. նախագահների հրամանով նշանակված աճուրդի ժամանակ 2,300 ռուբլու փոխարէն կուսահարկը վերցվեցաւ 6,510 ռուբլիով: Ահա թէ ինչպէս են կորչում քաղաքիս եկամուտները:

Այստեղի պարզ և ակտիւ օրերը տեղի տուին ցուրտ և խառնակ եղանակի. արդէն վեցերորդ օրն է, որ անընդհատ անձրև կամ ձիւն է տեղում:

Գիւղացի

ՆԵՄՈՒՆ ԼՈՒՌՆՈ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են: «Այսօր, յունվարի 6-ին, երբ ձեղ գրում եմ, մայրաքաղաքում ձմեռ է արդէն: Դեպքում ծածկված է սառուցով, որի վրա երիտասարդութիւնը սկսել է արդէն անմեղ լաւանակիջակալը»: Բայց կրկին չը կայ անցեալ տարվայ խիստ ձմեռ: Ջրօրհնէքը, սառնամանիքի այդ ամենաթուր օրերը, անցնում են, բայց մենք այնու ամենայնիւ չը տեսնուք մինչև այսօր նրա առանձնապատկութիւնները, որոնք անցեալ տարի այդքան խիստ կերպով էին արտայայտվել:

Մեղ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հետեւեալը: «Վեծնապատիւ պ. Սանատարեան, որի մօտ գտնվում էին նախկին հայ ուսանողների փողերը, յայտնի բան է տոկոսով վճել է, ինչպէս առում են, անպատճառ յետ տալ ուսանողներին այդ գումարը, որ մի ամբողջ 1,000 ռուբլու է հասնում: Երևում է որ մայրաքաղաքի հայ ուսանողները այս տարի յանկարծ կը հարստանան:

ԱՐԳԻՆԱ, գիւղից մեր թղթակիցը մեղ գրում է, որ այս օրերս կարելի սքազան առաջնորդը այցելել Դիրակի գաւառը, բացից փակված ուսումնարանները և ինքն իր ներկայութեամբ կարգեց հոգաբարձուներ, վարձեց ուսուցիչներ Ղզը-Չալախ, Բաշ-Շոթապետ, փրկալի, Օրթա-Բանդիկար և փայտբանի գիւղերի ուսումնարաններին համար: Այժմ դաստաւութիւնը սկսվել է: Առաջնորդը մի և նոյն ժամանակ օձեց հանդիսաւոր կերպով փախուկան գիւղի նորակաւոյց եկեղեցին:

ԲԱԳՈՒՄԻՑ մեղ գրում են, որ անցեալ տարվայ դեկտեմբերի 28-ին յօդուտ Բագուի հայոց Մարգարեական ընկերութեան գրատուն տեղի ունեցած ընտանեկան երեկոյից դրացաւ մուտքը 994 ռ. 80 կօպ., իսկ ծախը 244 ռ. 43 կօպ., ուստի մուտքից ծախը հանելով մնաց զուտ ար-

տերն էին հպարտանում նրա հետ ծանօթանալով: Եւ մի հերոս էր, որին եթէ չէին ամենքը յարգում, գոնէ աշխատում էին ընդդէմ չը դռնալ:

Սօֆիի թաղում համարիս բացառապէս արհեստաւորներ էին ապրում: Այդ պատճառով մի մարդ չեղաւ, որ դուրս գար կուսը հանդարտացնելու իսկ կատարածները, ինչպէս երևում էր, աւելի տաքանում էին:

Բացի ծեծից այդտեղ կար և մի զարհուրելի բան: Կուսուցները միմեանց սոսկալի յիշոցներ էին տալիս, որոնց միանգամայն սարսուռ պատճառով լուսով էին կուսի տեղը հաւաքված երեխաները, լուսով էին և Սօֆին: Բայց օրիորդը համարեա ոչինչ չէր հասկանում յիշոցներից: Նրա սիրտը էր զարնում և ուզում էր փախչել քնալ տուն: Բայց տեսարանը չուտով փրկվեց: Վրա հասան երկու ուսուցիչներ, ծառայողներ. թշնամիները հեռացան միմեանցից, էլ աւելի սաստիկ հայհոյանքներ ուղղելով միմեանց: Աստուածատուրն և չորս ուրիշ մարդկանց տարան ուսուցիչներն:

Երբ դրանք անցնում էին Մարգարի տան դռների մօտով, Սօֆին շտապեց թաքնվել: Բայց Աստուածատուրը տեսաւ նրան և մի շատ անամթ յիշոց տուեց: Օրիորդը առաջին վայրկեանում ու-

ղիւնը յօդուտ գրատուն՝ 750 ռ. 37 կ.:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեղ գրում են, որ այդ քաղաքի դեպքում ընտրվեցաւ պ. Մովսէս Դաշտոյեանց, որ առաջ մի քանի անգամ էլ է վարել այդ պաշտօնը: Յանկալի է, աւելացնում է թղթա-կիցը, որ պարոնը իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնէր այն բանի վրա, որ անասնապահ վաճառական-չարչները խիստ վնասում են խեղճ հողագործների արտերին և խոտատեղերին, արդեւ լով նրանց իրանց անասունների ոտի տակ: Լաւ կը լինէր, նմանապէս, որ քաղաքային գործերի վարչները աւելի ինայտուութեամբ վարվէին քաղաքային դրամների հետ, և չը վարձէին այնպիսի անձնաւորութիւններ, որոնք փոխանակ խաղաղութիւն պահպանելու, իրանց վարմունքով իրանք են դառնում այլ և այլ երկպառակութիւնների պատճառ:

Ինչպէս մեղ գրում են, այսօր վաղը ուղաւորվում է Ս. Պետերբուրգում մեր յայտնի բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանի դալը: Ինչ նպատակով է գալիս Պետերբուրգ մեր բանաստեղծը և որքան ժամանակ կը մնայ—թղթակիցն յայտնի չէ: Թղթակիցը բնի է որ մայրաքաղաքի հայոց հասարակութիւնը դիտաւորութիւն ունի պատուով ընդունել Պատկանեանին:

ԽԱՐԱՍՈՒՆ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեղ գրում են, որ այս օրերս այդ քաղաքի բնակիչ պ. Ի. Ա. Սելինեան ընծայել է Խարասու-Բազարի հայոց դրաբարանին ուսուցող Գոստոնովսկու բոլոր հեղինակութիւնների ժողովածուն: Որովհետեւ յիշեալ նուիրատուն առաջին անգամ չէ որ ամեն կերպ օգնում է քաղաքի հայոց դրաբարանին, ուստի Խարասու-Բազարի հայոց հասարակութիւնը յայտնում է պ. Սելինեանին իր խորին շնորհակալութիւնը:

Անցեալ տարվայ դեկտեմբերի 28-ին ԲԱԳՈՒՄԻՑ կուսի դահլիճում տեղի ունեցաւ ընտանեկան երեկոյ, որ բազմապէս էր համարեց, զբաղւած էր Բագուի ընտիր հայ հասարակութիւնը, կային և շատ օտարներն էլ: Երեկոյի կառավարիչներն էին Մարգարեական ընկերութեան խորհրդի անդամները, որոնք այդ երեկոյ որոշվում էին հիւրերից իրանց կողմէն կայացած ժապաւէններով: Երեկոյի կառավարիչներին աջակցում էին և մի քանի հայ տիկիներն ու օրիորդները, որոնք իրանց քաղաք վարմունքով գրաւում էին հասարակութիւնը. դրանք էին տիկին Պատուականեան, օր. Ջօրաբեան, օր. Թումայեանց և Սաֆարեանց օրիորդները:

Յունվարի 12-ին Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում հաւաքվեցան աւելի քան 50 հոգի այլ և այլ ուսուցչ համալսարանների նախկին ուսանողներ՝ Մոսկովայի համալսարանի զոյութեան 132-որդ տարեդարձը տօնելու համար: Հայկերոյթի ժամա-

չինչ չը զգաց, մինչև իսկ թեթիւ կերպով ժպտաց. բայց այդ վայրկեանից յետոյ նրա սիրտը լցվեցաւ նա լաց եղաւ և փախաւ դէպի տուն: Այդ ամբողջ օրը նրան տանջում էր Աստուածատուրի արնոտ և հարբած դէմքը:

Միջինու վրա տուն եկաւ ուստա-Մարգարի խիստ ծանր քաղցրով, յայտնեց կնոջը, որ շատ վատ է զգում իրան, ու պառկեց անկողնում: Աննամարը պատմեց այդ օրվայ անցքը, Սօֆիի անպատկառը: Անկողնում ընկած հիւանդը, որ խօսելու ակտիւ ամենեկին չուէր, յանկարծ ըսկեց յանդիմանել աղջկանը, որ նա դուրս էր եկել փողոցը:

—Տղամարդի գործը տղամարդն է խնամում, ընդ ինչ վայել էր տեսնել նրանց... Ահ, Սօֆի, ևս կարծում էի թէ դու թողել ես երեխայութիւնը... Օհ...:

Այդ խօսքերով վերջացրեց Մարգարի իր յանդիմանութիւնները, անդալով, ճառաւորով չուս եկաւ կողքի վրա, երեսը դէպի պատն արաւ ու դուրսը ծածկեց վերմակի տակ: Սօֆին ուզում էր արագ վել. ամբողջ տունը նրա համար խիստ նեղ էր երևում, չը գիտէր ինչպէս նստել, ուր կանգնել: Մայրն էլ մի կողմից էր յանդիմանում և երկի երկար չէր լալ, եթէ հիւանդը չը խնդրէր որ այդ անցքի մասին էլ չը խօսէ:

Ուստա-Մարգարի այլ ևս վեր չը կացաւ անկողնից:

(Կը շարունակվի)

հաղորդած այն լուրի պատճառով, որ իբրև թէ Գերմանիան բացառություն կը պահանջի Ֆրանսիայից, ֆրանսիական զորքերը սահմանադիր մոտ բերելու վերաբերությամբ փարիզի «Liber-տե» լրագիրը հաղորդում է, որ մինիստր Գոբլէ ասել է մի քանի պատգամաւորներին, որ այդ լուրը սուտ է:

ԼՕՆԻՕՆ, 13 յունվարի: Արտաքին գործերի մինիստրությունը ստացած լուրերը չեն հաստատում «Daily News» լրագրի հաղորդած յուզիչ լուրերը: Փարիզի անդրադարձնող զեռապանը հաղորդում է որ, ընդհանրապես, ֆրանսիական խաղաղասիրական ձգտումներ ունի:

ՓԱՐԻԶ, 13 յունվարի: Ֆրանսիական լրագիրները միաբերան յայտարարում են, որ ֆրանսիական խաղաղություն է ցանկանում, և որ նրան գէպի պատերազմի դրոշմը Անգլիան է:

ԲԵՐԼԻՆ, 13 յունվարի: Հիւսիսային Գերմանական (Նոթմանուր Լրագիրը) վճռական կերպով հերքում է այն լուրը, որ իբրև թէ Գերմանիան պահանջելու է ֆրանսիայից բացառություն այն բանի մասին թէ ինչու ֆրանսիան իր զորքը խոփում է գերմանական սահմանների մոտ: «Freisinnige Zeitung» լրագրի խմբագիրը դատապարտում է վեց ամսվայ բանտարկության այն պատճառով, որ դիտմամբ լուրեր է տարածել գերմանական դիւտորական լիազոր ներկայացուցիչ վիլիլիոյի Պետերբուրգում սպանված լինելու մասին:

ՄԻՆԱՆ 13 յունվարի: Բատտերները այստեղ հասան:

ՎԻԵՆՆԱ, 13 յունվարի, երէկ այստեղով անցաւ Կալէնի, ուրեմն այն լուրը թէ նա պէտք է տեսնուի Միլանում Բատտերներին հետ, — անհիմն է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 յունվարի: Հրատարակված է պետական խորհրդի վճիռը, որով թոյլ է տրվում գլխավորելու ծախել գինի և սպիրտ վեդրոյի հաբիւրերը մասի ծաւալ ունեցող անօթներում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 14-ին			
Ռուսաց 1 ռուբլ	Լոնդոնի վրա արժէ	225/16	պէնտ.
— — —	Համբուրգի վրա —	189 1/4	պֆ.
— — —	Փարիզի վրա —	236	սան.
Ռսկի —	արժէ —	8	86 կ.
Մադրասի կուպոններ —	—	172	50
Արժաթ —	—	1	43
Բորսայի դիվիդենդներ —	—	5 1/4	և 6 1/2
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	99	87	
— — —	2-րդ —	99	87
— — —	3-րդ —	98	87
— — —	4-րդ —	98	87
— — —	5-րդ —	98	87

— — —	6-րդ —	87	
Արևելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	99	—	
— — —	2-րդ —	99	—
— — —	3-րդ —	99	—
Նիդերլանդ 50/0 տապալի փոխառութ. երկրորդ	226	75	
5 1/2 0/0 բէնտա	103	25	
Ռսկեայ բէնտա	184	50	
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն	157	50	
50/0 գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	158	50	
5 1/2 0/0 գրաւական թղթեր խեղճութի կալուած. բանկի	97	12	
60/0 գրաւակ. թղ. խաղիովի կալ. բան.	102	87	
— — —	101	50	
— — —	102	—	
— — —	101	85	
— — —	102	50	
— — —	100	50	
— — —	101	50	
— — —	101	—	
— — —	27 և 43 տ. —	—	
— — —	18 և 43 տ. —	—	
Վ. օլփո-կամսկի բանկի ակցիաները	563	—	
Ռուսաց երկաթուղիների պլան. ընկ.	268	50	
Բիլլիան-վ. օլփո-կամսկի ընկ.	97	75	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրիւ-դաշխաներ	94	12	
Մոսկովայի քաղաք. օրիւդաշխաներ	95	25	
Օդեսայի — — — — —	93	25	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	—	—	
Նոր երկաթուղային բէնտա	98	62	
Պետական բանկի 6-դ հրատարակ-կուպոններ	—	—	
Գրաւ. թղ. Անն. բանկի	99	—	
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը բաւական ամուր է:	—	—	

ՊԱՏԱՍԻՆՆԵՐ

ԲԱԳՈՒ. Լ. Մ. Դ. Ջուր է բոլորովին այդ տե-սակ յօդուածների զրկելու: Հաւատացնում ենք ձեզ՝ այդտեսակներին պէտք է անտես առնել, մինչև անգամ մարդու տեղ չը գնել և կատարելու ու ամենախորին արհամարհանքով վերաբերվել դէպի նրանց անձնաւորութիւնը: Ուրիշ անթիւ ու ան-համար բաներ կայ գրեւոր:

ԱՍՍԻԱՒԱԴ. Դ. Խոբովին. Ձեր 10 ռուբլ 1886 թ-ի ապառիկը ստացանք:

ՆՈՒԻԻ. Մով. Խալիկոյանեանց: Այս, հինգ ռուբլ ստացված է, բայց չը գիտէինք ում համար: Ուրեմն այս 1887 տարի մենք ձեռնարկ 5 ռուբլի ստացանք ենք համարում և կուղարկուեմք ձեզ «Մը-շակը»: Մնացած 5 ռուբլին կարող էք յետոյ էլ ուղարկել:

ՇՈՒՇԻ. Ներսէս Բաճատրեանց. Ձեզ վրա ոչինչ ապառիկ չը կայ անցեալ 1886 թ-ին:

Խմբագիր-հրատարակող ԳԻԿՈՐ ԱՐԴՈՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

11—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами въ Тифлисе (Графская ул., противъ Музея).
ԲԱՆԴԱՐԱՎՈՐ ՀԱՍՏԱՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍԱՆ ԱՐԱՆԻՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆական փողոց, Մուզէի դիմաց):
Ստացված է Մալց-Էկատրակտ և հազի համար կոնֆեկտներ՝ «Մի հաղորդ»: Ձկան իւղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրավանի ձէթ, քաղախի է սէնցիտ, բուսական ձէթ, ԱՆԳԵԼԱՎԱՆ ԲԵՐ-ժԵՆԻ ԱՐԵՆԱՎԱՆ ՕՍԼԱՅ, լոնդոն փոխով և գունտերով: ԲՈՐ ՆԱՆԵԼՈՒ ղեղեր, կոչկաների և վեռ-նիճ կոչկաների համար. սամալարը և առհասարակ մետաղայ զործիքները սրբելու իւղ և փոշի: ՇՎԵԴԱՎԱՆ ԳՐԵՊՍԵՐ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԿԻ, և անտեսութեան ուրիշ պարագաները ԼՇՆԱԳԻՐԻ ԹԻՄՈՒՆՈՒ. Բաղրամբ. Թիմոնի կրէմ. է մօս-լիտ և Էնգլանտի կօսմեթիսիտի սրբիչներ, երեսի և մորթու թարմութիւնը պահպանելու համար: Կինոնիշի կէպպատ մաղերը պնդացնելու համար: Գեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ և ԲԱԳՈՒՆԻ նրա բաժանմունքում:

ПОДПИСКА НА

„Т Р У Д Ы“

Кавказскаго Общества Сельскаго Хозяйства 1887 года,

выходящіе еженѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяиственной промышленности,

ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,

въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Барятинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во все города Россійской имперіи и доставкою на домъ. Отдѣльные номера продаются по 50 коп. Для напечатанія въ „Трудахъ“ принимаются сельско-хозяиственныя объявленія, по соглаше-нію съ бюро Общества.

ՆՈՐ ԳԻՐԲ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻՋՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆԲԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 շրջան 35 կ. Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զեղուցի կը լինի Կենտրոնական գրավաճառանոցում:

11—30

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 15-ին, հայ դրամատիկոս ակումբի խումբը ԱՐԴՈՐՆԻ-ՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ կը ներկայացնի I ԷԼԻ ՄԷԿ ՋՈՀ դրամա հինգ գործ. հեղին. Գ. Սունդուկեանի և II ՇԵԼԼԵՐԻ ԱԻԱԶԱԿՆԵՐԻ հինգերորդ գործ. 1 պատկերը: Ֆրանց Մօօրի դերը կը կատարէ պ. Ազամեան:

Սկիզբն է 8 ժամին:

„ՍՐՍՐԱՏ“

ԱՍՍԱԳԻՐ

Կը հրատարակվի ամիսը մի անգամ: Բաժանորդագրութիւնը տարեկան է և ըսկա-վում է յունվար ամիսից. բաժանորդագրին է իւրաքանչեւ 4 ռուբլի. Տաճկաստան-նում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 ռուբլի, Հնդկաստանում 6 ռուբլի: Հասցէն, Эчмадзинъ, типогр. комитетъ.

1—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Հինգշաբթի, 22 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՈՋ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒՆ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակից երկր-նա, Փորտ-Սալիդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ: Տեղեկութիւններին մասին պէտք է զիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԲՈՒՐ-ԿԱՐՈՒԻ և ԸՆԿ. Իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՂՈՐԳ ՀԵՋՈՐԵԱՆ ՀԵՋՈՐԵԱՆՅԻ:

1—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Չորեքշաբթի, յունվարի 21-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւա-պետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլլ: Տեղեկութիւններին մասին պէտք է զիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէօխին, նախկին Արժ-րուհի գալլերէում, № 103.

3—3

ПОДПИСКА

на 1887 годъ

НА БОЛЬШУЮ ЕЖЕДНЕВНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ, ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

ГОДЪ ВОСЬМОЙ.

„Русскій Курьеръ“ выходитъ ежедневно въ форматѣ большихъ газетъ по слѣдующей программѣ:
I. Постановленія и распоряженія правительства.—II. Обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе „вопросовъ дня“.—III. Хроника: извѣстія—придворныя, военныя, научныя, литературныя, художествен-ныя, театральныя, музыкальныя, торговыя и др. Біографіи и некрологи.—IV. Телеграммы.—V. Московскій дневникъ.—VI. Мнѣнія русской и иностранной печати по текущимъ вопросамъ.—VII. Жизнь Россіи: народное образованіе, земство, городское и крестьянское самоуправленіе, промышленность и торговля; корреспонденціи изъ Россіи; извлече-нія изъ журналовъ и газетъ.—VIII. Иностранная извѣстія; корреспонденціи изъ-за границы; извлеченія изъ ино-странныхъ газетъ.—IX. Литературный отдѣлъ: романы, повѣсти, очерки, разсказы, сцены, стихотворенія.—X. Фелето-ны: обзоръ явленій внутренней жизни; литературная лѣтопись; обзоръ журналовъ; историческій анекдотъ; научная хроника; хроника заграничной жизни; театр и музыка.—XI. Критико-библіографическій отдѣлъ: статьи по разнымъ отраслямъ наукъ, искусствъ и промышленности.—XII. Судебная хроника: судебные процессы.—XIII. Разныя извѣ-стія: случаи, анекдоты и проч.—XIV. Справочный отдѣлъ: свѣдѣнія—биржевыя, желѣзнодорожныя, театральныя и отъѣзды редакціи.—XV. Объявленія.
Примѣчанія: 1-е. Въ „Русскомъ Курьерѣ“ помѣщаются ежедневно не исключая дней послѣдпраздничныхъ и табель-ныхъ: „политическое обозрѣніе“, фельетоны и передовыя статьи по текущимъ вопросамъ и по славян-скому. 2-е. Съ 19-го ноября с. г., количество матеріала въ газетѣ увеличено, приблизительно, на четы-реста строкъ. 3-е. Съ новаго года, кромѣ того, самый размѣръ газеты значительно увеличится и приба-вится до 600 строкъ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою въ Москвѣ:			Съ пересылкою во все города:			За границу:		
На годъ	9 р. — к.		На годъ	10 р. — к.		На годъ	20 р. — к.	
„ 6 мѣс.	5 „ — „		„ 6 мѣс.	6 „ — „		„ 6 мѣс.	12 „ — „	
„ 3 „	2 „ 75 „		„ 3 „	3 „ — „		„ 3 „	6 „ — „	
„ 1 „	1 „ 10 „		„ 1 „	1 „ 25 „		„ 1 „	2 „ 50 „	

1. Отдѣльныя №№ изъ конторы изданія и у разносчиковъ—по 5 к.—2. Подписка принимается съ 1-го по 1-е каждаго мѣсяца и не далѣе конца года.—3. Гг. Иногородніе. при возобновленіи подписки, благоволятъ прилагать свой печатный адресъ.—4. За переимѣнъ адреса городского и иногородняго—30 к. При переимѣнъ городского на ино-городняго доплачивается разниця въ цѣнѣ подписки.

ТАРИФЪ НА ОБЪЯВЛЕНІЯ:

За строку пети́та или за мѣсто, занимаемое ею: на первой страницѣ 20 к. за стр. На четвертой страницѣ 10 к. за стр. 1. За украшенія объявленій взимается прибавка 10%, съ сумми стоимости объявленій.—2. Доставляю-щимъ значительное количество объявленій дѣляется уступка.—3. Липамъ ищущимъ мѣстъ или занятій, Контора „Русск. Кур.“ печатаетъ объявленія со скидкой 30%, а предлагающимъ давать уроки 50% противъ тарифа.—4. Объявленія библіографическія, рекламы, объ уничтоженіи довѣренностей, о потеряхъ, объ умершихъ, о желаніи да-вать уроки, о медицинскихъ средствахъ и т. п., принимаются не иначе какъ съ засвидѣтельствомъ подлежащаго начальства.

Контора изданія открыта по буднямъ отъ 9 до 5 часовъ, а по праздникамъ отъ 10 до 2 ч., редакция—же—отъ 1 до 3 ч.

Редакторъ-Издатель Н. П. Ланинъ.

2—3